ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Ո՞ՐՆ Է, ԲԱԲՈ

— Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք.
— Էն, որ ունի բարձր երկինք,
Էն, որ ունի կարմիր արեւ՝
Իւր կապուտակ գլխի վերեւ.
Էն, որ ունի լեռն Ալագեազ՝
Հաւերն՝ աւուղ, ջրերը՝ սազ:
Էն, որ տեսով իր Սեւանի
Մազերն արձակ ու գեղանի՝
Նստած հարսի կը նմանի:
Էն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագաւոր՝ Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը մրմուռ,
Գլուխը վեր՝ դրախտի դուռ:
Էն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթար,
Որ աւերակ, բայց դեռ դարեր
Լուռ կ'աղօթեն երկինքն ի վեր:
Էն, որ ունի Արազ, Տղմուտ,
Եւ ափերը մամռոտ ու մութ
Գերեզմանները էն պապերուդ ...
Էն, որ Ղազբէկն ու Արազած՝
Արտերու մէջ՝ ախպեր կանգնած՝
Ձեռ կը զարնեն գինով թասին
Ու կը ձենեն մեր Մասիսին,
Թէ՝ «Հէյ, բաբո, բաւ չէ՞ մենակ
Պանդուխտ մնաս ամպերու տակ ...»:

***

Մեր լեռները բիւրեղ դառած
Ծիծաղում են յաւերժաձիւն,
Մեր լեռներից ակունք առած՝
Զուլալ կ'իջնի զուարթ Զանգուն:

Մուրազն առած աչքից բխող
Ուրախութեան արցունքի պէս՝
Իմ Սեւանից հազարաւոր
Ու մեր արտից կ'իջնի այդպէս:

Իսկ դու ուսկի՞ց կ'իջնես, Արազ,
Որ պղտոր ես նորից գալիս,
Ո՞ւմ արտից ես գալիս, Արազ,
Դեռ ո՞ւմ աչքն է քեզնով լալիս ...

Բայց ե՞րբ պիտի դու զուլալես,
Լոյս տաս իմ լոյս Զանգուի նման,
Որ ափերդ, շուրթերիս պէս,
Եղբայրութեան համբոյրներ տան:

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

digitised by A.R.A.R.@